Знание родного языка или диалекта, является одним из главных маркеров сохранения национальной идентичности. В Абхазии функционируют 31 школы в которых обучается около 2 тысяч учащихся. Для сравнения, в 1971 году число школ доходило до 110, а учеников до 20 тысяч, после войны 1992 -93 гг. на половину сократились школы и учащиеся. Безусловно, в период существования СССР образование армянских школ Абхазии ориентировалось на продолжение обучения в Армении, сегодня это направление, к сожалению, не популярно. Продолжать обучение по всем предметам на армянском языке, может окончатально привести к развалу армянского образования в Абхазии. Уже несколько десятилетий необходима реформа, нужна программа и средства, которых нет. Ряд школ, стали

преподавать технические предметы на русском языке, продолжая обучать на армянском родной язык, литературу, историю и географию. Возможно, еще не поздно остановить гибель армянского образования в Абхазии.

Не смотря на негативные прогнозы, вдохновляет, что литературным армянским языком, в Абхазии продолжает владеть больше половины армянского насе-



Г. Апшеронск, армянская церковь, 24 апреля.

ления, а на диалекте говорит подавляющее большинство армянских жителей. Особенно интересно, что диалект продолжает развиваться, обогащаясь литературными словами в диалектной форме.

Если в 1951 году на территории Краснодарского края имелось более 100 армянских образовательных школ, то в 1967 - 68 гг. их число сократилось до 12. Оставшиеся школы удалось сохранить на территории Большого Сочи, где еще в 11 русских школах около 2000 детей обучались армянскому языку и литературе. На сегодняшний день сохранились школы, в которых изучают армянский язык, как факультатив и историю Армении на русском языке. Это положение вещей отразилось на значительном уменьшении количества владеющих армянским языком, более того около 1/3 амшенского населения не говорит на диалекте или знает его мало.

В Туапсинском, Апшеронском, Горячеключевском и Белореченском районах после закрытия армянских школ в 1951 году обучение родному языку не велось ни в какой форме, литературный армянский знают только старшее поколение. В 90-х годах XX века с возрождением национальной общественной жизни, делались попытки открытия факультативов армянского языка во всех районах, как правило, через несколько лет они закрывались. Это можно объяснить тем, что не было общей программы, последовательной координации и финансирования. Сегодня, продолжают функционировать несколько факультативов и воскресных церковных школ. Ситуация с владением в этих районах армянским диалектом катастрофична, молодежь его не знает или использует на уровне жаргона.

6. Наука и культура

Помимо существующей армянской общественной организации САР, которая возлагает на себя в основном представительную функцию, действует ряд научно - культурных, просветительских обществ, которые основной целью в своей деятельности видят сохранение и возрождение культуры Черноморских амшен-

ских армян.

Краснодарская краевая общественная организация Армянский научно - культурный центр «Амшен», которая проводит и участвует в научно - практических конференциях, круглых столах и семинарах, организует историко - этнологические экспедиции, издает сборники, книги и информационные листки.

Земляческая благотворительная об-

щественная организация «Амшен» (г. Ереван), ею издается ежемесячная газета «Дзайн амшенакан» (Голос амшенский).

Ассоциация амшенских армян (г. Москва), ею издается журнал «AMSHEN».

Армянское благотворительное культурно-просветительское общество «Амшен» Туапсинского района, известно по организации ежегодного фестиваля армянской культуры.

При центре национальных культур Лазаревского района существует центр армянской культуры, который уже на протяжении десяти лет организует и проводит фестивали армянской культуры в местах компактного проживания амшенских армян в Краснодарском крае и Адыгее.

Центр Понтийско-Кавказских исследований при КубГУ организует и участвует в различных проектах относящихся к исследованию Черноморских армян.

Ряд независимых историков, краеведов занимаются исследованием истории и культуры амшенских армян, действуют несколько десятков танцевальных и музыкальных групп. Все эти организации и активисты в той или иной мере сотрудничают, но эти связи носят спорадический и не последовательный характер, что отражается на эффективности всей просветительской деятельности.

7. Проблемы сохранения национальной идентичности и пути их решения.

Для амшенских армян потеря диалекта, культурных маркеров равносильно потери своей идентичности. Не занимаясь этими вопросами, мы обречены в лучшем случае на естественную ассимиляцию, а в худшем на деградацию. Можно поменять фамилию и называть себя русским, но это не значит быть таковым. Это как отплыть от одного берега, но так и не пристать к другому, примером такого пограничного существования могут быть Хопа хемшилы. Более того, этот процесс уже идет, но его еще не поздно остановить. Это все в наших с Вами руках.

В начале 80-ых гг. прошлого века среди амшенских армян исчезла культура игры на духовом инструменте тулум, возможно, такая же судьба ждет остальные элементы нашей культуры.

Существует региональное отделение САР, есть другие организации краевого и районного уровня, индивидуальные активисты, которые с тем или иным успехом занимаются проблематикой сохранения амшенской культуры. Другое дело, что мы видим недостаточность прилагаемых усилий, которые не удовлетворяют сегодняшние потребности в них.

По этому, предлагаю не объединять их в новую структуру, которую нужно регистрировать, тратить энергию и средства на ее становление, что само по себе несет в себе опасную тенденцию для всех армян региона. Нужно заложить основы и объявить о начале нового «Движения» по сохранению и возрождению культуры Черноморских амшенских армян. В это «Движение» будут вовлечены все, кто так или иначе ратует за сохранение одной из чудесных форм культуры армянского народа, которая издревле представлена в Черноморском регионе. В нем не должно быть руководства и правления, а лишь инициатива и воля активистов, а представительскую функцию для этого движения могут нести уже существующие организации.

Есть проблемы, которые сложно решить без помощи из Армении, это касается составления планов и организации обучения армянскому языку. Мы понимаем, что государство Армении не может сотрудничать с Республикой Абхазия, но существуют не правительственные армянские организации в Армении и Спурке, которые могут протянуть руку помощи нашим соотечественникам в Абхазии и поддержать их.

Предложения, которые могут стимулировать идею возникновения «Движения» по сохранению и возрождению культуры Черноморских амшенских армян.

1. Фонд развития по сохранению и возрождению культуры Черноморских амшенских армян.
2. Организация конкурсов с призами (кьяманчивос, танцевальных групп, музыкантов).
3. Проведение фестивалей культуры черноморских армян в различных регионах.
4. Проведение научных конференций, круглых столов по проблеме сохранения и возрождения культуры Черноморских амшенских армян.
5. Пропаганда культуры черноморских армян: документальные фильмы, обучающие диски, музыкальные диски и т.д.

6. Организация научных экспедиций в Дженик - Орду, Трабзон и Амшен (Понт).

7. Сохранение имеющихся музеев и организация новых, картографирование некрополей.

8. Распространение информации об амшенских армянах в Интернете, например www.Kagalhana и на других носителях, сбор информации и контактов о музыкантах, танцевальных коллективах, краеведах и энтузиастах.

Это открытое предложение для всех интересующихся проблемой сохранения культуры и самобытности Черноморских амшенских армян, инициатива должна исходить от ВАС.

Սկզբը՝ 3-րդ էջում:

ՄԱՅԿՈՊՅԱՆ ԽՃԱՆԿԱՐ

Բալայրյանից ցանկանում ենք իմանալ նաև հայկական եկեղեցու տեղը: Նա պատրաստակամորեն մի քանի ժամոթների է գանգահարում, բայց չի կարողանում պարզել՝ կա՞, կանգո՞ւն է, արդյոք, եկեղեցին, թե վաղուց է քանդվել: Նա ասում է, որ պետք է գնալ նախկին Հայկական փողոցը, ամենայն հավանականությամբ եկեղեցին այնտեղ է եղել:

Մենք ուղևորվում ենք նշված հասցեով: Չափում ենք փողոցը վերից վար, բայց միակ մեծ շենքը հին ոճով կառուցված պիոներ-պալատն է: Այստեղ մոտակայքում բնակվողներից հարցնում ենք եկեղեցու տեղը, շատերը լուր չունեն, իսկ իր դարձն ապրած մի պառավ ձեռքը թափ է տալիս ու ասում.

– Վաղու՞ց, շա՞տ վաղուց են քանդել, երեսնական թվականներին:

Ցանկանում ենք մանրամասներ իմանալ, հարցուփորձ ենք անում պառավին, իսկ նա միայն կրկնում է.

– Վաղու՞ց, վաղու՞ց են քանդել, էլ մի փնտրեք...

Որոշում ենք գոնե նախկին հայկական դպրոցի շենքն ու ակումբը գտնել:

Մտածելով, որ դպրոցն էլ, ըստ երևույթին, այս կողմերում է եղել, մենք ուղևորվում ենք հարևան փողոցները, բայց ապարդյուն: Վերջապես, մի ինչ-որ գրասենյակի մոտ կանգ ենք առնում, ներս մտնում և որոշում աշխատակիցներից հարցնել: Ներսում մի քանի երիտասարդ կանայք են, ասում են, որ իրենց դիրեկտորը հայ է և պետք է նրան դիմել, նա անպայման կիմանա: Մտնում ենք դիրեկտորի առանձնասենյակը: Ծանոթանում ենք: Վերջինիս Աղամայանցը Մայկոպի ռեստորանների և ճաշարանների տրեստի դիրեկտորն է: Հայաստանի Եղեգնաձորի շրջանի Խնձորուտ գյուղից է, բայց արդեն վաթսույն տարի բնակվում է այստեղ: Հարցնում ենք նախկին հայկական դպրոցի տեղը.

– Չգիտեմ, ազնիվ խոսք, չգիտեմ, - ասում է նա, - իսկ այ, եկեղեցին հիշում եմ: Փոքր էի, ներկած ձվեր էինք տանում եկեղեցի, բայց հիմա տեղը չեմ հիշում: Ճիշտ է, Մայկոպը փոքր քաղաք է, բայց, դե, աշխատանք, տուն...

Վերջինիս Աղամայանցը գանգահարում է 09-ը, բայց 09-ը ևս ոչնչով չի կարողանում օգնել, հետո գանգահարում է մի քանի հայ ժամոթների, սակայն ամեն մեկը տարբեր հասցե է տալիս:

– Իսկ հայկական ակումբը հիշում եմ, - ասում է նա, - Սպայի տան մոտ էր: Հիմա դրա տեղում փոքրիկ պուրակ է: - Եվ թիկաթոռում ավելի հարմար տեղավորվելով, վերհիշում է, - է՛քանի՞-քանի տարի է անցել: Այն ժամանակ ակումբում զեկուցումներ էլ էին կարդում, հայերեն ներկայացումներ էլ էին լինում... Ո՞նց են թռչում տարիները:

Դուրս ենք գալիս փողոց, դրսում մաքուր ու սառն օդ է, չնայած սեպտեմբերն է, բայց արդեն արտաշնչելիս գոլորշի է բարձրանում: Չգիտեմ, տարին է ցուրտ, թե մենք ենք մրսում:

Ո՞նց էի մոռացել, պետք է գնալ Աղղեական ԻՄ պատմության երկրագիտական թանգարան, այնտեղ անպայման մեզ կօգնեն:


Միհարկանի փոքրիկ թանգարանում ևս մեզ չեն կարողանում օգնել: Ճիշտ է, թանգարանի մինչսովետական բաժնի վարիչ Լիդա Սիլվանյան մեզ այլ փաստեր է տրամադրում, ասում, որ դարասկզբին Մայկոպի արդյունաբերությունը հայերի ձեռքին է եղել, այն ժամանակ գործել են Թերզիկի և Մակուսանովի ծխախոտի ու Խարասանովի ձիթահան գործարանները:

Այնուհետև Սիլվանյան ու մյուս աշխատակցուհիները եռանդով մեզ բացատրում են թանգարանի ցուցանմուշները: Վահանակներից մեկում Դ. Տեր-Մկրչյան անունով, ինտելիգենտ արտաքինով մի երիտասարդի նկար է փակցված: Սիլվանյան պատմում է, որ 1904 թվականին Մայկոպում տեղծվել է սոցիալ-դեմոկրատական խմբակ և Տեր-Մկրչյանն էլ նրա անդամներից էր:

- Ընդհանրապես Մայկոպի հեղափո-



Մայկոպի հայկական դպրոցը՝ կառուցված 1907 թ.:



յա գեղամը ընդունվում է կոմունիստական կուսակցության շարքերը, Մայկոպի գործարաններում և հարևան ստանցիաներում ակտիվ աշխատանք տանում կոմերիտական բջիջների ստեղծման ուղղությամբ: Շուտով նա դառնում է երիտասարդ կոմերիտականների սիրելին և 1921-ին ընտրվում կոմերիտական երիտասարդական կազմակերպության 3-րդ համագումարի պատգամավոր, ուր տեսնում և լսում է Լենինին: Հետագայում նա բազմիցս մասնակցում է բանդիտների դեմ կռիվներին և վիրավորվում: Շուտով աշխատում է կուսակցության շրջկոմում, միաժամանակ խմբագրում «Կրասնի պախար» թերթը: 1924-ին ընտրվում է կուսակցության 13-րդ համագումարի պատգամավոր: Այս քսանչորսամյա գեղամը գործուղվում է Մոսկվա՝ ուսումնառության, որից հետո աշխատում է Դոնի Ռոստովում՝ կուսակցության մարզկոմում, 1927-30 թվականներին՝ Կրասնոդարի կուսակցության երկրկոմում: Բայց 1937-ին կտրվում է նրա կյանքի թելը:

Իհարկե, վաղուց է հասունացել Հյուսիսային Կովկասում գործած հեղափոխական հայ մարտիկների և կուսակցական գործիչների մասին պատմող աշխատություն ունենալու հարցը: Անշուշտ, այդ ուսումնասիրությունը շատ նոր էջեր կավելացնի հայ հեղափոխական շարժման և հայ զաղթախների պատմության մեջ:

Մայկոպից գնում են արևելք: Այստեղ մի քանի հայկական գյուղեր կան, բայց ես փնտրում եմ Արածեխի գյուղը, ուր պատերազմից հետո մի 12-13 ընտանիք հայ է փոխադրվել:

Ինչպես դարեր առաջ, այսօր էլ աղը դեղական (չերքեզական) գյուղերում բազմաթիվ հայեր են բնակվում: Եթե նախկինում նրանք հիմնականում դրիմահայեր էին, այսօր գերակշիռ մասը համաձայնաբեր են: Գյուղի կենտրոնում հավաքված աղղե երիտասարդների խմբում մի երկու հայ կա, հարցնում են, թե որտեղ է բնակվում Մնացական Գասպարյանը: Նա այս գյուղում նոր մարդ է, և տղաները դժվարությամբ են նրա տան տեղը նշում: Մնացականին դեռ փնտրել էի Չեռնիգոլում՝ Մայկոպից մի քանի ժամվա հեռավորության վրա է գտնվում: Ասել էին, որ մեկ ամիս առաջ 63-ամյա Մնացականը ամուս-


նացել է և կնոջ մոտ տեղափոխվել՝ Արածեխ: Նա համաձայն դիմել է, վերջին մոտիկաներից, և ես ցանկանում էի պարզել՝ հնարավո՞ր է այդ եզակի դիմից պատրաստել: Վերջապես գտնում եմ Մնացականին: Ծանոթանում եմ նրա նոր կնոջ, աղջկա և փեսայի հետ: Փեսան ռուս է, շուրջ 25 տարի զինվորական ծառայության մեջ է եղել Հայաստանում, և մենք զրույցի շատ ընդհանուր եզրեր ենք գտնում: Մնացականը դյուրաշարժ, կենսախիռն մարդ է, ներսուղորս է անում, բայց զգացվում է, որ նորափեսան իրեն այնքան էլ ազատ չի զգում: Հարցնում եմ դիմի մասին.

- Դիմը թողել եմ քրոջս մոտ՝ Խաղեփնակում: Անիրավը այնքան մեծ է, որ երկուսիս համար մի տանը նեղվածք կլինեք, - կատակում է Մնացականը, - իսկ ճիշտը որ ասեմ, ու՞մ համար բերելի: Հիմա ո՞վ է զուռնա-դիմով հարս տանում... Ու՞ր մնացին մեր ազգային հարսի պարը, հարսին ծի ստեղծելու պարը, հարսին ճանապարհ դնելու և այլևայլ սքանչելի մեղեդիներն ու երգերը, պարերը: Միանք ունենի ոչ միայն գեղագիտական, այլ դաստիարակչական նշանակություն, - Համաձայն թարգմանի լեզվով խոսում է Մնացականը:

Արածեխից Մայկոպ ճանապարհին հայկական գյուղեր են՝ Ցվետոչմայա, Տուլսկ, Շահումյան, Վերին Շահումյան... Կարճ ժամանակով կանգ եմ առնում Շահումյան գյուղում՝ Սարգիս Գուգույանի տանը: Նրա հետ ծանոթացել էի դեռևս Ուլ՝ Դերեում՝ Սև ծովի առափնյա մի գյուղում, Գուգույան տոհմի ավանդական հավաքի ժամանակ: Ինչպես այս կողմերի մյուս գյուղերը, Շահումյանը ևս հիմնականում փայտաշեն, փոքր գյուղ է՝ 80 տուն: Վերին Շահումյանն ավելի մեծ է՝ 100 տուն, նույնքան էլ՝ Տուլսկում: Ինձ ուրախացրեց այն, որ Սարգիս ավագ որդին վարժ գրում և կարդում էր հայերեն: Բանն այն է, որ մինչև 1960 թվականը գյուղում հայկական միջնակարգ դպրոց է եղել, իսկ մինչև հայերենի ուսուցչի թոշակի անցնելը՝ 1977 թվականը, դասավանդվել է հայոց լեզու:

Բազմաթիվ խոհերով ու մտորումներով վերադառնում եմ Մայկոպ, այնտեղից բռնում տունդարձի ճամփան: Բարակ անձրև է մաղում և հայկական փայտաշեն, թրջված գյուղերը ծածկում է մշուշը, ինչպես հայելու վրա արտաշնչելիս խունանում է պատկերը, լուծվում սպիտակ մշուշի մեջ:

«Սովետական գրականություն», 1983, N 5:



խական շարժումների պատմությունն ուսումնասիրելիս ես շատ հայերի եմ հանդիպել: Նրանք ակտիվ գործունեություն էին ծավալել հեղափոխության շրջանում: Ցավոք, նրանցից շատերի մասին քիչ տեղեկություններ ունենք, և այս գործում անհրաժեշտ է Հայաստանի գիտնականների օգնությունը: Հեղափոխական շատ հայ գործիչներ այստեղ կամ կարճ ժամանակով են բնակվել, կամ այլևայլ պատճառներով հեռացել են քաղաքից, իսկ թե ուր են գնացել, հետագայում ինչպիսի գործունեություն են ծավալել, մեզ անհայտ է: Մենք նրանցից շատերի լուսանկարն անգամ չունենք: Ճիշտ է, այժմ թանգարանում նեղվածք է, բայց ապագայում, երբ ավելի հարմարավետ շենք կունենանք, մենք սիրով այդ բոլոր նյութերը կցուցադրենք:

Այստեղ երկի տեղն է, որ մի քանի խոսք ասենք նաև Չարենցի եղբայրներից մեկի՝ Գեորգի Գեղամ Սողոմոնյանի մասին: Մանավանդ որ նա հանճարեղ բանաստեղծի եղբայրը լինելուց բացի նաև Հյուսիսային Կովկասի կուսակցական-պետական նշանավոր գործիչներից էր:

Կարմիր բանակի հաղթական մուտքի հենց առաջին օրերին՝ 1920-ին, քսանամ-

ԼՈՐ ՄԱՐԵԱՆ

Թուրքիայում թաքնված հայերը դուրս են գալիս ստվերների տակից

Ցեղասպանությունը, որի 96-րդ տարեկիցը նշվել է այս տարի, իր հետևից թողել է իսլամ ընդունած վերապրածների սերունդներ: Այդ թաքնված հայերն այսօր խախտում են լռությունը երկրի ժողովրդավարացման շնորհիվ:

Այս կիրակի հավատացյալները չափազանց շատ են, որպեսզի բոլորը տեղավորվեն Բոսֆորի ափերին գտնվող Բոյաջըքյոյի փոքրիկ եկեղեցում: Նստարանների վրա Ստամբուլի հայկական համայնքի անդամները ճանաչելի են հենց առաջին հայացքից: Կանանց սանրվածքներն անթերի են, նրանց ամուսինների կոստյումները դեռ նոր են արդուկված: Այստեղ և այլուր որոշ տոնական հագնվածներ ջերմեռանդ խաչակնքում են: Սակայն նրանց շուրթերը վարանում, կակազում են, երբ երգերն արձագանքում են աղյուսե կամարակապ շինության մեջ: Այդ մոտ քսան նորեկները, որոնք դեռ մուսուլման են կամ նոր են մկրտվել, վերահայտնագործում են իրենց պապերի կրոնը: Նրանք չգիտեն կրոնական ավաղույթները, խոսում են թուրքերեն կամ քրդերեն, բայց նրանք իրենց պապերի հայկական ինքնության հետ նորոգվելու որոնումների մեջ են:

Պաշտոնապես Թուրքիայում ապրում է ընդամենը 65.000 հայ, որոնք վերապրել են երիտթուրքական կառավարության կողմից կազմակերպված Ցեղասպանությունից, որի հետևանքով Առաջին աշխարհամարտի ընթացքում սպանվել է շուրջ մեկ միլիոն հայ: Սակայն կոտորածներից խուսափելու համար հազարավոր հայեր են իսլամացել: Երևույթը շարունակվել է նաև հանրապետության հռչակումից հետո (1923 թ.). բավականին աշխարհիկ ժամանակակից Թուրքիան փոքրամասնությունների հանդեպ որդեգրել է թշնամական քաղաքականություն: Փաղտնի հայերն անցել են 20-րդ դարը՝ մուսուլմանի դիմակի տակ թաքնված, ջերմեռանդ կերպով այցելել մզկիթ, լռության մատնել իրենց ինքնությունը: Նրանք թուրք են դարձել՝ ողջ մնալու համար: Տասնամյակների ընթացքում պետության ժխտողականությունը ջանքեր է գործադրել Ցեղասպանության բոլոր հետքերը թաքցնելու ուղղությամբ և բառ անգամ չի արտաբերել Ցեղասպանությունից վերապրածների մասին, որոնք ոճրագործության ամոթալի ապացույցներն են:

Սելահեդդինը ծու էր ներկում Ջատիկին

Վերջին տարիներին Ցեղասպանության վրա դրված տաբուն վերացվել է՝ ժողովրդավարացման գործընթացի շնորհիվ, որը կոտորում է թուրքական ռասայի անաղարտության մասին դոգման ու մարտահրավեր նետում քեմալիստական գաղափարախոսության մեթոդով պատմությանը: Անհավանական կերպով քիչ, բայց կան թուրք մտավորականներ ու պատմաբաններ, որոնք հեռուստաալիքներով և մամուլի միջոցով հարձակում են գործում Աթաթուրքի հանրապետության ստեղծած ժխտողականության վրա: Կիրակի օրը տեղի ունեցավ 1915 թ. կոտորածների ոգեկոչումը ողջ աշխարհում և արդեն երկրորդ անգամ Ստամբուլում՝ թուրքական քաղաքացիական հասարակության նախաձեռնությամբ: Լարվածության այս թուլացումը գետնի տակից դուրս գալ սկսող երրորդ կամ չորրորդ սերնդի օգտին է: Եվ Թուրքիան հայտնագործում է, որ հայկական արյունը հոսում է իր երակներով:

Դեռ ութ ամիս առաջ Միհրան Փրկիչ



Գյուլթեքինը կոչվում էր Սելահեդդին, մուսուլմանական մի անուն, որը նշանակում է «կրոնի մաքրություն»: 50 տարեկան այս ստամբուլցի ծագումով Դերսիմից է, պաշտոնապես Անատոլիայի (Արևմտյան Հայաստան-«Ակունք» խմբ.) քրդական և ալիական մի շրջանից, որտեղ, սակայն, կան բազմաթիվ թաքնված հայեր: Հոկտեմբերին նա ստացել է իր քաղաքացիական կարգավիճակի փոփոխությունը հաստատող փաստաթուղթ: Նա հայարտությամբ է հանում իր ինքնության վկայականը, որը կրում է «քրիստոնյա» նշումը: «Վերադառնալ քրիստոնեությանը՝ նշանակում է արժանին մատուցել կոտորված իմ ժողովրդին, - բացատրում է նա: - Գրքեր ընթերցելով՝ ես գիտակցեցի կատարված ողջ վայրագությունը, և հենց այդ կերպ իմ որոշումն սկսեց հասունանալ»: Նրա ընտանիքում իսլամին անցումը կատարվել է մեկ սերունդ առաջ: «Իմ պապը հայ էր, բայց նրա անունը, որը գրանցվել է հորս ծննդյան վկայականում՝ ծնված 1923 թ., Հյուսեյին է: Այդ անկախում ժամանակաշրջանում ընտանիքս կանգնած էր մահվան, բռնի աքսորի կամ կրոնափոխման ընտրության առաջ»: Նրա մանկության հուշերը գաղտնի պահված արձանագրության մասին չափազանց երանից պատահաբար բաց թողնվածների խառնուրդն էին: Նրա ծնողները իրենց մեջ խոսում էին մի լեզվով, որն անհասկանալի էր գավակների համար: Ամեն տարի՝ գարնանը, Սելահեդդինը ծու էր ներկում իր եղբայրների և քույրերի հետ՝ առանց իմանալու քրիստոնեության՝ Ջատիկա ավանդույթի մասին: Գոյություն ուներ նաև այդ առեղծվածային հայ մորաքույրը, որն այցելում էր իրենց: «Գարնանը մեզ դիմում էին գյավուր (անհավատ) անունով, - պատմում է նա: - Դա տարօրինակ էր. մենք միշտ գիտեինք, որ հայ ենք, բայց դա չէր ասվում»: Իրենից բռնի խված ինքնության որոնումների արդյունքում Միհրան Փրկիչ Գյուլթեքինը մկրտվել է, ներկայումս հաճախում է հայերենի դասընթացի և հույսեր տալով, որ «մի օր ավերակ դարձած Դերսիմի եկեղեցիները կվերաբացվեն բոլոր նրանց համար, ովքեր այնտեղ են մնացել թաքնված»:

Վախը միշտ առկա է
Ստամբուլում Հայոց պատրիարքարանը գուսպ է մնում սման հայերի վերածնունդների հանդեպ, բայց ընդունում

է նրանց գոյության փաստը: «Երևույթը նոր է, - հայտնում է մի եպիսկոպոս, որը նախընտրում է անանուն մնալ: - Հետզհետե նրանցից ավելի շատերն են խզում լռությունը և գալիս՝ ծեծելու մեր դուռը: Ժողովրդավարացման մթնոլորտն այս հարցում նպաստավոր է, բայց վախը դեռևս պահպանվում է. խնդիրը միշտ զգայուն է քաղաքական առումով»: Հոգևորականը շտապում է ընդգծել, որ իր եկեղեցին ոչ մի քարոզչություն չի անում Անատոլիայում՝ մտավախություն հայտնելով, որ նրանք չափմիջակ են շատ ակտիվ ավետարանական միսիոներների կողմից, որոնք ուլտրանացիոնալիստ թուրքերի թիրախ են. «Ինչպես Օսմանյան կայսրությունում՝ հիմն ևս կրոնը շարունակում է ինքնության ողնաշարը լինել: Թուրք-մուսուլմանական քարոզչությամբ ձևավորված հասարակության մեջ մեծամասնության դեմ դուրս գալը դավաճանություն է համարվում»:

Ժամանակի ընթացքում այդ կրոնափոխների մի մասն ուժացվել է: Ուխտագնացություն՝ դեպի Մեքքա, չաղրա կրող աղջիկներ... Հաճախ են հնչում այն վկայությունները, թե «գարնիկները շատ բարեպաշտ են դարձել և կորել տեսադաշտից»: «Ես մի իմամ ազգական ունեմ, մեկ ուրիշն էլ իսլամիստ է», - պատմում է նրանցից մեկը: Սակայն ուրիշները ցուցաբերել են դիմակայելու ռազմավարություն. ընտանեկան գաղտնիքը շուրջով փոխանցվել է սերնդեսերունդ, ամուսնությունները կանոնակարգված են իսլամացած ընտանիքների մերսում... Անատոլիայում գյուղացիները կամովին խախտում են լռության օրենքը արտասահմանցիների առաջ: «1915 թ. վերապրած մի հորեղբայր մեզ պատմել է փոսերը զգված մարմինների, գյուղի վերջում տարագրության ընթացքում կատարված սպանությունների մասին, - մանրամասնում է Թալեթը, ով ապրում է Լիջեում՝ երկրի արևելքում, որտեղ մեծամասնություն են կազմում քրդերը: - Մեզ մոտ ոչ ոք նամազ չի անում, և մենք մզկիթ ենք գնում միայն ուրբաթ օրերը, այն էլ՝ ձևականորեն: Մեր արյունը հայկական է»: Հարևանության համար դա հանրահայտ գաղտնիք է, քաղաքապետարանի համար՝ նույնպես: «Միայն 10 տարի առաջ, պետական համակարգում աշխատող ընկերոջս շնորհիվ, ես հնարավորություն ստացա հասու լինել օսմաներենով գրված մի փաստաթղթի, որում

նշված էր մեր հայկական ընտանիքի անունը՝ նախքան թրքանալը»: Իշխանությունները հոգ են տանում, որ փաստաթղթերով առանձնացնեն իրենց նեղություն տվող այդ քաղաքացիներին: Վարչական մարմինները նրանց հետևում էին, ինչպես «հինգերորդ շարայանը»՝ որդեգրելով մոռացության քաղաքականություն, որպեսզի ջնջեն նրանց գոյությունը:

Մեծ մոր գաղտնիքը

Հենց Ֆեթիյե Չեթինն է, 2007 թ. սպանված հայ լրագրող Հրանտ Դինքի ընտանեկան փաստաբանը, թույլ տվել բարձրացնել քողը այդ անտեսանելի վերապրածների վրայից: Նա 2004 թ. հրատարակել է իր նախնու կենսագրությունը՝ «Մեծ մայրս» վերնագրով: Այդ «աստվածավախ մահմեդական կինը, որը օրական հինգ անգամ նամազ էր անում», նրան թույլ է տվել անցնել իր հայ լինելու կյանքի շեմից. 1915 թ. տակալին երեխա՝ նա առևանգվել էր մի թուրք ժանդարմի կողմից, որի կինն ամուլ էր: Գիրքը բեստսելլեր է: Ֆեթիյե Չեթինը «Թռեներ» գրքով շարունակել է հուշագրության աշխատանքը: Նա Ցեղասպանության ճանաչման համար պայքարող համալսարանի դասախոս Այշե Գյուլ Ալթընայի հետ մեկտեղ ժողովել է շատ հաճախ՝ փրկված աղջիկների սերունդների 25 ներկայացուցիչների պատմությունները, վերապրածներ, որոնք բռնի ընդգրկվել էին թուրքական օջախներ: Հիմնականում անանուն մարդկանց կողմից վստահված այդ պատմությունները ցույց են տալիս այն շուրջ, որ ապրել են թռեները, երբ իմացել են ճշմարտության մասին, տատանվող ինքնությունները, հայկական ու թուրքական արյուն ունենալու, միաժամանակ զոհ և դահիճ լինելու բարդությունը: «Վկայելիս նրանք վախի և ամոթի միջև էին», - ընդգծում է Ֆեթիյե Չեթինը: Դեռ որքա՞ն են նրանք նախընտրում լռել: «Մենք՝ թռեներս, միլիոնավոր ենք, և մենք կրում ենք սերնդեսերունդ փոխանցվող տառապանքի ժառանգությունը», - հայտնում է նա:

Սակայն դավանափոխների անհետացման համար մեղավոր է ոչ միայն թուրքական քարոզչությունը: Պատմության կողմից այդ մոռացության մատնվածները չեն հիշատակվում նաև հայկական սփյուռքի պատմություններում: Ֆրանսիայում, ԱՄՆ-ում կամ Լիբանանում ապաստանած հայկական սփյուռքը մահացածների մեջ է թողել նրանց, ովքեր մնացել են հետևում: Նրանք, որպես իսլամացածներ, կորած հոգիներ էին հայկական համայնքի համար: «Լռությունը նաև հաստատվել է հայկական պատմագրության մեջ, որը համարում է, թե նրանց դավանափոխությունը հեռացրել է նրանց հայկական ինքնությունից», - ընդգծում է Այշե Գյուլ Ալթընայը: Ստամբուլի Սաբանջը համալսարանում աշխատող այդ սոցիոլոգ կինը կարծում է, թե ոչ թուրքական, ոչ էլ հայկական պատմագրությունն արդյունավետ չեն գործել այս հարցում. «Թուրք ու հայ մեր որոշ պատմաբանների ազգայնամուլական տեսակետը, որը հիմնվում է ռասայի կամ էթնոսի վրա, վախեցնում է հաշվի առնել կրոնափոխ հայերին, քանզի նրանց գոյությունը կոտորում է «մաքրության» պատրանքը, որի վրա են հիմնվում ազգերը»:

«Լը Ֆիգարո» օրաթերթ, Փարիզ
25.04.2011
Ֆրանսերենից թարգմանեց
ՄԵԼԻՆԵ ԱՆՈՒՄՅԱՆԸ
Akunq.net

ՍԵՐՈՒՅՑ ՎԱՐՂԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱՍ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտաշխատող

Յէ մա
(Աղբ)

Մայրիկ
(Ողբ)
(թարգմանություն)

ՆՈՐ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Մեր թերթի նախորդ համարում ներկայացրել էինք Թուրքիայի Արդվինի նահանգի խոսվածքի գավառի Քեմալ-փաշա ավանում ծնված, ստամբուլաբնակ երգչուհի Նուրջանըմի երգերից մեկը: Այս անգամ տպագրում ենք նրա «Փեշեմալ: Բեն Արթվինին քրոջը» (Գոգնոց: Ես Արդվինի աղջիկ եմ) խոսակցական ժանրով նվիրված ողբերգ: Համշենցիները սովորություն ունեն հանգուցալին ողբալով գովել, ուստի ողբալու ասում են «քովուշ» (գովել): Այս օգոստոսին, երբ խոսվում էի, Նուրջանըմի ազգականներից տեղեկացա, որ նրա մայրը ողջ է: Ուրեմն ներկայացվող երգը ոչ թե անձնական վշտի արտահայտություն է, այլ ժողովրդական ողբերգերի հենքի վրա ծնված ստեղծագործություն:

«Նըջանլու դէս» գվարձախոսությունը Բորչկայի և խոսվածքի գավառներում տարածված համանման պատմություններից մեկն է:

Ինչպես պարզաբանեց Բորչկայի գավառի Չայլը գյուղի գյուղապետ Նազըմ Քուլչաքի եղբայրը՝ Ջևդեթ Քուլչաքը (ծնվել է 1967թ. Չայլը գյուղում, գբաղվում է տրանսպորտային բեռնափոխադրումների բիզնեսով, «Դեմիրքուլ» ընկերության սեփականատերն է), Արդվինի նահանգի խոսվածքի և Բորչկայի գավառների կրոնափոխ համշենցիների շրջանում, դեռևս մի 30 տարի առաջ կենդանավարում էր «Նըջանլու դէս»՝ նշանածին տեսնելու, ավանդույթը: Նշանվելուց հետո, մինչև ամուսնությունը սովորաբար 2-3 տարի էր անցնում, և փեսացուն աղջկա մուտիկ ազգականների ու հարազատների, հատկապես հորեղբոր կնոջ աջակցությամբ, աղջկա հորեղբոր տանը գաղտնի հանդիպում էր նրան, ավելի մոտիկից շփվում: Ինչու՞ հենց հորեղբոր տանը, քանզի հորեղբոր տունը լինում էր հարևանությամբ, իսկ հորաքույրերն ու մորաքույրերը հարս էին գնում և ապրում ավելի հեռու գտնվող տներում: Տան արական անդամները չէին իմանում, կամ էլ ցույց էին տալիս, որ տեղյակ չեն այդ հանդիպման մասին: Երբեմն աղջկա եղբայրներից, տան արական անդամներից մեկը դեմ էր լինում, համառում էր: Նման դեպքերում, ինչպես ասաց խոսվածքի Գյունեշի (Չաղրինա) գյուղի մի բնակիչ, փեսան մեկի միջոցով նրան նվեր, գումար էր տալիս, կամ համոզում էին, բացատրում, որ այս է ավանդույթը:

Քանի որ այս գաղտնի հանդիպումները լինում էին մուրն ընկնելուց հետո, իսկ խոսվածքի և Բորչկայի գավառներ էլեկտրականությունը մուտք է գործել 1970թ. վերջին և 1980-ականներին, ուստի երբեմն փեսացուները մթության մեջ արկածների էին հանդիպում, հայտնվում ծիծաղելի իրավիճակներում:

Ասոր նօարս աղա՞ր թա, յէ մա,
Ջէրմագ գյալինլուդէթ հաքա՞ր թա, յէ մա,
Սուսլի, էրանդ բօյօվէդ, յէ մա,
Ասոր նօարս աղա՞ր թա, յէ մա,
Ցէված լաստիքնիյէթ շիմին ջօթին, յէ մա,
Մանգաղէ մարաղին ջօթին, յէ մա,
Ջօրօթ փէրգէթ ածուքին, յէ մա,
Բիթունան ալ վագ անցա՞ր թա, յէ մա,
Շա՞ղ դարթ ունէդի թա, յէ մա,
Դէրման չունէդի՞ թա, յէ մա,
Թուն օբօլ այէր մէգի, յէ մա,
Յէս վար թէնօղ չիմ քէգի, յէ մա:
Ցէնէս գէրդէցալ, յէ մա,
Հօքիս թօմնէցալ, յէ մա:
Քէգի մաղաղ էլլիմ, յէ մա,
Յէս ալ քէգի հէդ մէրնիմ, յէ մա:
Հիմի լուսանա անա, յէ մա,
Սօբան վօ՞վ քօլօղ ա, յէ մա,
Դէփուրէ վօ՞վ վար թէնօղ ա, յէ մա,
Մէգի վօ՞վ ժօղօղ ա, յէ մա,
Իստանբուլու նաս, յէ մա,
Յէս ցէգի ժօղվէցի, ասա, յէ մա:
Խաղուլիգ էթաքլուդէդ, յէ մա,
Թուխ հէլուլի յազմադ, յէ մա,
Փանդաղէ ափուր, յէ մա,
Քէրուն դունա՞ն քուքսա թա, յէ մա:
Էլլի չի, յէ մա, էլլի չի,
Աս աշխարէս մարտուգ էլլի չի:
Հա՞, քաուն էգօ՞ղ ա թա, յէ մա,
Քուքուն էգօղ, գանջօ՞ղ ա թա, յէ մա,
Չաղգէնին ծաղօղ ա թա, յէ մա,
Գալաշէ փէջօ՞ղ ա թա, յէ մա,
Անուշ հօղէթ, յէ մա, էգօ՞ղ ա թա, յէ մա:
Ջիգրիս մէջէ վարէ, յէ մա,
Էբէդի թօմնօ՞ղ ա թա, յէ մա:
Էրթա մի, յէ մա, էրթա մի,
Աչվէցէս արդէսուքէ վաթէ մի,
Յա ինձի յալ դար, յէ մա,
Յա թուն ալ էրթա մի:
Քէգի մաղաղ էլլիմ, յէ մա,
Յէս ալ հէդէթ մէրնիմ, յէ մա,
Քու բարգած հօղիդ մէջէ, յէ մա,
Յէս ալ քէգի հէթ փէթիմ, յէ մա:

Խոսքը և երաժշտ.՝ Նուրջանըմի

Նըջանլու դէս

Մէր փօլօրէ նըջանլու դէսի շաղ հէքիյանիյէ գօն:
Մէգ մարթ մէ նըջանլուին քյաղնիուս գէրթա: Ախ-
չիգին օղագինէ դաղին քիշէրէ գարնու ջամփացան,
գասա թա.

-Մէ մարթ բարգէց օջ, ան բարգա թօղ, էնթամէ
նըջանլուիթ դէսնու գուս, հիմի քումին բայիմ:

Մարթուն քումէ դէսէցէնա գու, մարթն ա քումին
մէջնիյուս մէդնու գու, թէմալ վախա գու ախչիգին
ախապարնան, փէրնօղ ուն դէլի: Գէրէջէլօվ քալա
գու, օտքէ փէրգին քըլխուն վաան թէնա գու, փէր-
գին բօջէ քըլխուն թիբնու գու, վախան գօրչա գու:
Անու ցէնէ ախչիգին ախապրէ դունէ իմանա գու.

«Մէմէ քումին փուր էնիմ» - գասա:
Քումին թուրէ փաց գէնա, մարթուն դէսնու գու:
Մէդօղուն գէլլի, քօղ քիդա, փէրնա գու, գութա, չէ-
փէցնա գու: Քումին էշաղն ա խէրդի գու, զըռուշի
գըվիջի գու, էրգուսին ա հէդէթու օթքէրօվէ չիֆթէ
գութա: Դանիսօքէ քուքսան, ասօց դօքսօրի դանի
գուն:

**Ասացող՝ Նեջդեթ Չաքմաք, ծնվել է 1986թ.
Արդվինի նահանգի Բորչկայի գավառի Չայլը
գյուղում: Այժմ վարորդ է աշխատում Թուրքիայի
Բուրսա քաղաքում:**

Նշանածին տեսնելը

Մեր կողմերում նշանածին տեսնելու շատ պատ-
մություններ կան:

Մի մարդ նշանածի գյուղ է գնում: Աղջկա հորեղ-
բոր կինը տղային գիշերը ճանապարհից վերցնում,
ասում է.

-Մեր ամուսինը չի պառկել, թող նա քնի, այն ժա-
մանակ նշանածիդ կտեսնես, հիմա գոմում պահես:

Մարդուն գոմը ցույց է տալիս, մարդն էլ գոմն է մտ-
նում, համ էլ վախենում է աղջկա եղբայրներից, որ
կբռնեն: Կռացած քայլում է, ոտքը քլունգի գլխի վրա
է դնում, քլունգի պոչը գլխին է դիպչում, վախից գո-
ռում է: Նրա ծայրը աղջկա եղբայրը տանը լսում է.
«Մի հատ գոմը նայեմ»- ասում է:
Գոմի դուռը բաց է անում, մարդուն տեսնում է:

Մութ է լինում, գիտի գող է, բռնում է, խփում է, շրմ-
փացնում: Գոմի էշն էլ խրտնում է, սկսում է զբալ, եր-
կուսին էլ հետևի ոտքերով քացի է տալիս: Տեսցիները
գալիս են, սրանց բժշկի են տանում:



Առածներ

1. Մէգ սունօվ բաղ էլլի չի:
(Մեկ սյունով ցանկապատ չի լինի):

2. Ջուգալէ ջուգալին «Թուխ քէգուր»* աստած ունի:
(Կաթսան կաթսային «Ան հետույթ» է ասել):
* Բէգդուր բառը տուտուգ, երեխայի հետույթ
իմաստով օգտագործվել է նաև Սեբաստիայում (պգ-
տակ) և Խոտորջրում (պգտուկ): Այդպես են անվանել
նաև թըշունների որովայնի վերջավորությունը՝ տուտու-
գը:

**3. Մասրափուշէ* էլած ա մաշմուրքին ծառին վաան,
թէքուցած ունի:**
(Մասրափուշը բարձրացել է շագանակենու վրա,
թքել է):

* Սև ծովի ափին աճում է մասրենու մի տեսակ, որի
ցողունները որպես հենարան օգտագործում են ցանկա-
պատերը, մագլցում են մոտակա ծառերն ի վեր: Դրանց
խոսվածքի համշենցիներն անվանում են մասրափուշ, իսկ
պտղին՝ մասուրին, ասում են հավու լիլիգ:

Պատկերավոր խոսք

Յէս քօղութին էնօղ էլլիմ անա, ան քիշէր լուսնիքան
թիբնու գու:
(Որ ես գողություն անելու լինեմ, այն գիշեր լուսինը
դուրս կգա):

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ ՍԵՐՈՒՅՑ ՎԱՐՂԱՆՅԱՆ: Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՄՇԵՆ» հայրենակցական-քարեգործական հասարակական կազմակերպություն:
Հասցեն՝ Երևան-37, Ազատության 2, բն. 8: Հեռախոս՝ (+374+10) 20 21 26: Գրանցման վկայական՝ N 03U054979, տրված՝ 26.06.2002թ.: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին:
Արտատպության կամ մեքենայի դեպքում հղումը՝ «Չայն համշենցիականին» պարտադիր է: Գրատարակվում է 2004թ. օգոստոսից:

«ДЗАЙН АМШЕНАКАН» (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации «АМШЕН» (г. Ереван),
Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЯН. Издается с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 20 21 26. «HAMSHEN» Compatriotic-charitable public organization (Yerevan).
«DZAYN HAMSHENAKAN». Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 20 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com, www.dzaynhamshenakan.org